ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ԳՀԱՊՁԲ-7/1-1

ք. Երևան 28.12.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության՝ կոնսորցիումի պայմանագիր «ՍՈՒՇՅՈՆԻԵ ՊՐՈԴՈՒԿՏԻ» ՏԴ ՍՊԸ/, ի դեմս տնօրեն Հ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 389672304 (երեք հարյուր ութսունինը միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար երեք հարյուր չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2019-2021թթ., համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Քանի որ պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով «ՍՈՒՇՅՈՆԻԵ ՊՐՈԴՈՒԿՏԻ» ՏԴ ՍՊԸ-ի հետ, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը**:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գ, 26փ, 14տ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04427695
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ)/)	Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ): Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված կարտոֆիլ ոչ պակաս 13 գրամ, կաղամբ ոչ պակաս 9 գրամ, բազուկ ոչ պակաս 6 գրամ, գազար ոչ պակաս 2 գրամ, սոխ ոչ պակաս 2 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս տեսակի), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, 1 հատ դափնու տերև, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ և քացախ ոչ ավել 1 գրամից: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստ ճաշատեսակ: Անվտանգությունը TP TC 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:
2	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոսպով)	Արագ պատրաստվող ապուր՝ ոսպով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված ոսպ ոչ պակաս 15.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստ ճաշատեսակ: Անվտանգությունը TP TC 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:
3	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ լոբով)	Արագ պատրաստվող ապուր՝ լոբով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված լոբի ոչ պակաս 15.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստ ճաշատեսակ: Անվտանգությունը TP TC 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:

4	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով)	Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված ոլոռ ոչ պակաս 15.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստի ճաշատեսակ: Անվտանգությունը ՏՊ ՏՀ 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:
5	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով)	Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված սիսեռ ոչ պակաս 15.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստի ճաշատեսակ: Անվտանգությունը ՏՊ ՏՀ 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:
6	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բրինձով)	Արագ պատրաստվող ապուր՝ բրինձով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված բրինձ ոչ պակաս 18.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստի ճաշատեսակ: Անվտանգությունը ՏՊ ՏՀ 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:
7	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով)	Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով: Արտադրողի տեխնիկական պայմանների համաձայն, ինֆրակարմիր չորացման եղանակով չորացված մակարոնեղեն ոչ պակաս 15.5 գրամ, կարտոֆիլ ոչ պակաս 15 գրամ, գազար ոչ պակաս 1 գրամ, սոխ ոչ պակաս 1.5 գրամ: Ճարպի զանգվածային մասը 0.15%-ից 0.17%, համապատասխան համեմունքներով (չորացրած կանաչի՝ մաղադանոս, համեմ տեսակների), օգտագործելով նաև տոմատի մածուկ 2-ից 3 գրամ, արևածաղկի ձեթ 7-ից 7.5 գրամ, բոված ալյուր 2-ից 2.5 գրամ, կերակրի յոդացված աղ 3-ից 4 գրամ: Չափաբաժինը փաթեթավորված պոլիէթիլենային վակումային անհատական փաթեթով՝ 1 փաթեթի մեջ 7 չափաբաժին, տոմատի մածուկը և արևածաղկի ձեթը պետք է փաթեթավորված լինի վակումային ամուր պոլիէթիլենային փաթեթներով: Ստվարաթղթե արկղերով 1 արկղի մեջ 50 փաթեթ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 90%: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 6 ամիս: Չորացված ապուրը պատրաստված լինի

		այնպես, որ օգտագործելու ժամանակ վրան ավելացվի եռացրած ջուր, եռացնել 10-ից 15 րոպե հետո այն պատրաստ լինի որպես պատրաստի ճաշատեսակ: Անվտանգությունը ТР ТС 021/2011-ի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ 135-Ն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:

Ծանոթություն՝ *Արագ պատրաստվող ապուրների փաթեթավորման փաթեթների վրա պիտակավորված, իսկ արկղերի վրա դրոշմված լինի՝*

1. Արտադրող ձեռնարկության անվանումը

2. Արտադրանքի անվանումը, տեսակը

3. Արտադրության ժամկետը

4. Մատակարար ձեռնարկության անվանումը

5. Պահպանման ժամկետը

6. Ապրանքի քաշը՝ արկղերի վրա մակնանշված լինի փաթեթների քանակը հատով, քաշը՝ բրուտտո, նետտո, իսկ փաթեթների վրա մակնանաշված լինի միայն զտաքաշը

7. <<Զինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը

8. Օրենքով սահմանված այլ տեղեկատվություն

9. Արկղերի վրայի գրառումները մակնանշված լինեն տեսանելի վայրում, ներկով 7-ից 10մմ բարձրությամբ տառերով, տվյալ ապրանքատեսակին չվերաբերվող այլ գրառումներ չի թույլատրվում:

10. Ստվարաթղթե ամուր արկղերով, հնգաշերտ ծալքավոր:

11. Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն:

13. Փաթեթավորումը խախտված ապրանքատեսակների մատակարարումը արգելվում է:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գ, 26փ, 14տ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 04427695
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2019-2021թթ
1	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ)/)	կգ	40368	1379	55667472	Բոլոր ապրանքատեսակների մատակարարումը կիրականացվի 2019-2021թթ.-ի ընթացքում՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի համար 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:
2	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոսպով)	կգ	40368	1379	55667472	
3	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ լոբով)	կգ	40368	1379	55667472	
4	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով)	կգ	40368	1379	55667472	
5	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով)	կգ	40368	1379	55667472	
6	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բրնձով)	կգ	40368	1379	55667472	
7	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով)	կգ	40368	1379	55667472	

Ծանոթություն՝ մատակարարման վայրը՝ ք. Երևան, Սարմի 103 հասցեում:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գ, 26փ, 14տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 04427695
տնօրեն

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/1-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գումարը	Նախատեսվում է ֆինանսավորել
1	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բանջարեղենով (բորշչ)/)	15891400/510/10/3	55667472	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
2	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոսպով)	15891400/511/10/3	55667472	
3	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ լոբով)	15891400/512/10/3	55667472	
4	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ ոլոռով)	15891400/513/10/3	55667472	
5	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ սիսեռով)	15891400/514/10/3	55667472	
6	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ բրնձով)	15891400/516/10/3	55667472	
7	ապուրներ (Արագ պատրաստվող ապուր՝ մակարոնով)	15891400/517/10/3	55667472	

Նշում՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Գեղանիստ գ, 26փ, 14տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570028193630100
ՀՎՀՀ 04427695
տնօրեն

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/1-1 պայմանագրի

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/1-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն